ՄԱԴՈՆԱ Կ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Պատմության և իրավագիտության
ֆակուլտետի մագիստրոս
Գիտական գրադարանի գրադարանավար
madona.martirosyan.94@list.ru

ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

Ամփոփում

Հոդվածում համառոտ արծարծվում է Տիգրան Մեծի (մ.թ.ա 95-55 թթ.) կերպարը գրականության, քանդակագործության, գեղանկարչության, երաժշտության ասպարեզում: Ներկայացվել է նրա կերպարը որպես հայրենասիրության բարձրագույն խորհրդանիշ:

Հայ արվեստագետ հեղինակները գրեթե անդրադարձ չեն կատարել Տիգրան Մեծի կերպարին: Միայն պատմաբաններն են անդրադարձ կատարել թեմայի շրջանակներում: Մինչդեռ 1684-1858 թվականներին եվրոպական բեմերում ամեն տասնամյակ ծնունդ է առել մի նոր «Տիգրան» օպերա: Հայ հեղինակների կողմից հայոց արքայի կերպարին անդրադարձ կատարվել է 1940-ական թվականների առաջին կեսից սկսած՝ խորհրդային Հայրենական պատերազմի շրջանում: Ֆաշիզմի դեմ մարտնչող խորհրդային ժողովուրդների հայրենասիրական ու մարտական ոգին բարձրացնելու նպատակով արվեստի, գրականության և այլ ոլորտներում սկսեցին ներկայացնել պատմական գործիչների: Հայրենասիրական ոգու, անկոտրում հաստատակամության, ֆիզիկական ու մտավոր ուժի մարմնացման, հաղթանակների ու աշխարհակալության գաղափարի կրող Տիգրան Մեծը դարձավ սիրված կերպար: Այդ շրջանից սկսած Տիգրան Մեծին նվիրված, հայրենասիրական ուղղվածություն ունեցող, պատմագեղարվեստական երկեր, կտավներ ու քանդակներ են ստեղծվել, որոնցից յուրաքանչյուրն իր մեծ ներդրումն ունի հայոց մեծագույն գահակալի՝ Տիգրան Մեծի կերպարի հանրահռչակման գործում: Դեռևս աշխարհում հայտնի չէ որևէ գահակալ, որի կերպարը այդչափ հուզած ու հիացրած լինի եվրոպական կոմպոզիտորներին, ինչպես Տիգրան Մեծի կերպարը: Մեզ արդեն հայտնի է 41 օպերա, որտեղ Տիգրան Երկրորդն իր մեծ դերակատարումն ունի: Այդ օպերաներից ավելի հանրաճանաչ է Վիվալդիի «Տիգրան» օպերան: Դրանք առաջին հերթին մարմնավորել են հայրենիքին անվերապահ նվիրումի գաղափարը:

Բանալի բառեր և արտահայտություններ. Տիգրան Մեծի կերպարը, Հայկ Խաչատրյան, Խաչիկ Դաշտենց, Անտոնիո Վիվալդի, «Տիգրան Մեծ» շքանշան, Էդուարդ Իսաբեկյան:

Ներածություն

Հայ իրականության մեջ Տիգրան Մեծի անունը նույնացվում է «ծովից-ծով Հայաստան» հասկացության հետ անգամ այն դեպքում, երբ մարդիկ չեն էլ մտաբերում, թե որ ծովից ո՛ր ծովն է ձգվել Տիգրան Մեծի ստեղծած Հայաստանը: Տիգրան Մեծը քառորդ դարում ստեղծել է մի հզոր աշխարհակալություն, որի սահմաներն ու քաղաքական ազդեցության ոլորտները ձգվել են Եգիպտոսից և Կարմիր ծոցից մինչև Կովկասյան լեռներ, Կասպից ծով և Ամուդարիայի հովիտ, Սև ծովից ու Փոքր Ասիայի կենտրոնից մինչև Պարսից ծոց և Հնդկական օվկիանոս, Միջերկրական ծոցից մինչև Հինդոսի ավազան:

Հայոց տերությունը, գերիշխանության ներքո գտնվող երկրներով և քաղաքական ազդեցության ոլորտներով, կազմել է շուրջ 3 մլն. քառակուսի կմ տարածք, որը տասն անգամ գերազանցել է Մեծ Հայքի բնական և քաղաքական տարածքը, որտեղ խոսել են 15-ից ավելի լեզուներով[1]: Այնինչ այսօր դրանից մնացել է ընդամենը 29.743 կմ^2 տարածք:

Ահա թե ինչու մենք հույս ունենք որ Տիգրան Մեծի կերպարի նորովի բացահայտումը որոշ չափով կօգնի հայ հասարակությանը հաղթահարել այն թերարժեքության զգացումը, որը մեր ժողովրդի հոգեբանության մեջ մտել է 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո: Այժմ պետք է հիշենք հայոց պատմության փառահեղ էջերը, որպեսզի ապագային նայենք ոչ միայն առաջինը քրիստոնեությունը ընդունած ժողովրդի դիտանկյունից և տրվենք Աստծո բարեհոգությանը, այլ ապագային նայենք նաև ի դեմս՝ Մենոուա արքայի, Արգիշտի Ի-ի, Սարդուրի II-ի, Ռուսա II-ի, Արտաշես Ի-ի, արքայից արքա Տիգրան II Մեծի և հայոց պատմության երևելի անհատների կողմից մեծ քաղաքակրթություն կերտած, վեհության ու փառքի բազում դարեր մաքառած ու ապրած նախնիների ժառանգիների աչքերով:

Մեթոդաբանությունը

Տիգրան Մեծի կերպարին անդրադարձել են որպես քաղաքական նշանավոր դեմքի: Սակայն նրա կերպարի ներկայացումը որպես մշակույթի ստեղծարարության հիմքի, որը հայրենասիրության բարձրագույն խորհրդանիշներից է, որևէ լուրջ ուսումնասիրության չի ենթարկվել: Եթե անգամ այդպիսիք առկա են, ապա միայն շատ թռուցիկ անդրադարձով:

---

[1] Տե՛ս **Մովսիսյան Ա.,** Տիգրան Մեծ թագավորներից մեծագույնը, Ե., ԵՊՀ, 2010 էջ 41:

Փաստենք, որ Հայոց արքայի կերպարը իր արտացոլումը գտել է գրեթե բոլոր ոլորտներում՝ սկսած պատմագրությունից ավարտած կիրառական արվեստի մեծ ու փոքր ստեղծագործություններում: Հոդվածը ներառում է հետևյալ նպատակներն ու խնդիրները: Փորձ է արվում ամփոփ ներկայացնելու այն ոլորտները, որոնցում Տիգրան Մեծի կերպարը հանդես է եկել որպես հայրենասիրության խորհրդանիշ: Քննության են ենթարկվել այն գլխավոր և առանցքային երկերը, որոնք հնարավորություն կտան մեկ ամբողջության մեջ դիտարկել Տիգրան Մեծի կերպարը կերտած հեղինակների աշխատանքների պատմականությունը: Աշխատանքը գրվել է պատմաժամանակագրական, վերլուծական, համադրական և նկարագրական մեթոդների լույսի տակ:

***

Տիգրան Մեծի կերպարը հայի համար իր պատմության լուսավոր երևույթներից մեկն է: Բայց պետականություն չունեցող ժողովուրդն այն չէր կարող տարփողել: Իսկ 1920 թվականից սկսած, երբ խորհրդային պետությունը ռազմակալեց Հայաստանի Հանրապետության տարածքը և սկսեց կեղծ եղբայրության դարաշրջանը, հայ հերոսների մեծագույն մասը մոռացության մատնվեցին: Ինչպես էր հնարավոր անդրադարձ կատարել հազարամյակներ մշակույթ ու աշխարհակալություններ ստեղծած ժողովրդի պատմականությանը, պատմությանը ու այն համեմատության մեջ դնել պատմականությունից զուրկ, թուրանական մի ցեղախմբի «պատմության» հետ: Եվ հենց դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ եվրոպական պատմագրության, գրականության, երաժշտության, արվեստի ու առահասարակ մշակույթի տարբեր ոլորտներում ավելի վաղ ներկայացված Տիգրան Մեծի կերպարը, խորհրդային տարիներին հայ պատմագրության մեջ վախվորած մոտեցում է ցուցաբերվել:

Տիգրան Մեծն աչքի է ընկել անկոտրում կամքով, հայրենիքի պատմական շահի հանդեպ խստագույն նվիրվածությամբ, վերջնական նպատակին հասնելու տոկուն հաստատականությամբ, իր ժամանակի մեջ գործելու և այդ ժամանակը տասնյակ տարիների հեռավորությամբ դիտարկելու կարողությամբ:

Ռուբեն Մանասերյանը նշել է, որ «Հռոմի մեծագույն մտավորական, Տիգրան Մեծի ժամանակակից Մարկոս Տուլիոս Կիկերոնը շեշտում է Տիգրան Մեծի բնավորության այդ կարևորագույն գիծը. «Նա ինքնին կորովալից էր»: «Կորովալից» բառով մենք թարգմանել ենք հռոմեական «vehemens» բառը, որն ածականն է «vehementia» զուտ հռոմեական հասկացության: «Vehementia» նշանակում է «ֆիզիկական, մտավոր և ոգեղեն ուժի զուգակցում, միահյուսում», նաև «կիրք»:

Պատմական Մեծ անհատի՝ Տիգրան Մեծի գործունեության ուսումնասիրությունը և սերունդների կողմից դրա գնահատումն ու արժևորումը պատմական գործընթացների ու ճակատագրի կերտման համատեքստում անկյունաքարային հիմք է, որ յուրաքանչյուր պարտություն ազգի ինքնագիտակցության մեջ արթնացնում է անցյալի երբեմնի հռչակն ու փառքը և այն ձգտումը, որ այդ ճանապարհին պետք է հասնել առավելագույնին՝ նույնիսկ անհնարինը դարձնելով հնարավոր: Երիցս ճշմարիտ է, որ սեփական պատմությունից չոգեշնչվող, հզոր պատմություն կերտող անհատներին նմանվել չցանկացող, պատմական սխալներից դասեր չքաղող ազգերը դատապարտված են անհայտության:

Հին, օտար պատմիչները աղճատել են Տիգրան Մեծի կերպարը: Դա մեծապես պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ նրանք ծառայել են միայն հռոմեական պետության և իմպերատորների շահերին: Բայց Տիգրան Մեծի կերպարը վատաբանող հեղինակներին չի հաջողվել պատմության հազարամյա փոշու տակ թաքցնել նրա հռչակն ու մեծությունը: Դրա վկաներն են Տիգրանի Մեծի պալատական պատմագիր **Մեթրոդորոս Սկեպսացին, Թեոփանես Միտիլենացին:** Վերջինս ուղեկցում էր Պոմպեոսին Հայաստան կատարած արշավանքի ժամանակ: Թե ինչ է մեզ հասել և թե որքան հարազատ են վերարտադրված բնագրին մնացել պատմիչներն ու հետագա ուսումնասիրողները, հայտնի չէ: Այսու օտար աղբյուրների հավաստիությունը այդքան էլ հուսալի չէ[3]:

Սակայն վաղ կայսերական շրջանի պատմագիր **Վելլեոս Պատերկուլոսը,** անդրադառնալով Լուկուլլոսի և Պոմպեոսի Հայաստան կատարած արշավանքին, տալիս է Հռոմում հայոց արքա Տիգրան Մեծի մասին ձևավորված քաղաքական գնահատականը. «*Նա իր ժամանակի հզորագույն թագավորն էր և թագավորներից մեծագույնը*»[4]:

Տիգրան Մեծը պատմաբան **Նիկոդայոս Դամոնցի** ամենասիրելի գործիչներից է: Դամոնցը գրել է, որ Տիգրանը գահ է բարձրացել Միհրդատից ավելի ուշ, սակայն կարողացել է ստեղծել նրանից տասն անգամ ավելի մեծ տարածություն ունեցող տերություն: Պատմաբանը հաստատել է, որ Տիգրանն իրեն դրսևորել է որպես աշխարհակալ և լուսավորիչ: Պատմաբանը նշել է, որ արքայից արքայի գործունեությունը բոլորովին նոր

---

[3] **Դամոնց Ն.,** Հայաստանի պատմություն/ ակունքները X-VI դդ մ.թ.ա./, Ե., «Հայաստան», 1972, էջ 322:

[4] Թարգմանությունը բնագրից Ռ.Լ. Մանասերյանի (տե՛ս **Հովհաննիսյան Պ.Հ., Մովսիսյան Ա.Ե.**, Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հտ.1, հնագույն ժամանակներից մինչև մ.թ. 298 թվականը, Ե., ԵՊՀ, 2007, էջ 362-363:

լուսաբանման կարիք ունի: Գրել է. *«Տիգրան Մեծն իր արժանավայել տեղը պետք է գրաղեցնի Արևմուտքի երբևէ իշխած տիրակալների շարքում: Նա արժանացել է մեծ տիտղոսին՝ պատվավոր մի կոչման, որը պատմությունը հազվադեպ է շնորհում իր ընտրյալ դերակատարներին»*[5]: Ֆրանսիացի խոշոր պատմաբան **Ռընե Գրուսեն** հաստատել է Ադոնցի այն կարևոր նկատառումը, որը վերաբերել է Տիգրան Մեծին, ապացուցում է, որ լուսավորյալ և իմաստուն գահակալը մոռացված է պատմության կողմից, մինչդեռ նա եղել է իր ժամանակի Արևելքի ամենանշանավոր ու մեծագործ գահակալը: Եվ նրա կողմից պատմական գործչին բնութագրող գերագույն գնահատականը հետևյալ է. *«…Նա շատ ավելի մեծ արժանիքներ ունի, քան ժամանակակից Միհրդատը, որով հիացել է պատմությունը, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ Միհրդատը փայլուն կերպով ինքնասպանության մղեց իր պետությունը, մինչդեռ Տիգրանը իր ժողովրդի ապրելու իրավունքն ապահովեց հավիտենականության համար»*[6]:

***

Հայ իրականության մեջ 1941-1945 թվականների խորհրդային Հայրենական պատերազմը նոր խնդիրներ է դրել գրականության առջև, բարձրացել է գրականության հասարակական ազդեցության նշանակությունը: Հայ գրականությունն այդ շրջանում նշանակալի հաջողություններ է ձեռք բերել բոլոր ժանրերում: Առաջին պլան է մղվել հրապարակախոսությունը, հայրենասիրական կրքոտ հոդվածներով հանդես են եկել Ավետիք Իսահակյանը, Նաիրի Զարյանը և ուրիշներ: Գրողներից շատերը դիմել են ժողովրդի հերոսական անցյալին: Դ. Դեմիրճյանը և Ս. Զորյանը ստեղծել են «Վարդանանք», «Պապ թագավոր» հայրենասիրական բարձրարժեք պատմավեպերը[7]:

Հենց այդ ժամանակաշրջանից էլ սկսած՝ գեղարվեստական գրականության ասպարեզ մուտք է գործել Տիգրան Մեծի կերպարը:

Տիգրան Մեծի կերպարակերտման առաջին փորձը մեզանում պատկանել է **Սմբատ Շահազիզին,** որի **«Միջին Տիգրան»** խորագրով բանաստեղծությունը գրվել է 1864 թ. հունիսի 2-ին: Այս նույն թվականին Շահազիզը գրել է նաև **«Միհրդատ»** բանաստեղծությունը:

---

[5] **Դոլուխանյան Ա.,** Նիկողայոս Ադոնց, Ե., «Արեգ», 2022, էջ 50-51:

[6] **Դոլուխանյան Ա.,** Մեծանուն պատմաբան, բյուզանդագետ և հայագետ Ն. Ադոնցը (Ծննդյան 140-ամյակի առթիվ), Պատմա-բանասիրական հանդես, Ե., ՀՀԳԱԱ, 2011, էջ 7-21: (Տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն հ.1, էջ 555):

[7] Տե՛ս **Սարգսյան Գ.Խ., Հակոբյան Թ. Խ., Ներսիսյան Մ. Գ.,** և ուրիշներ, Հայ ժողովրդի պատմություն /հնագույն ժամանակներից մինչև մեր օրեր/ Ե., ԵՊՀ, 1972 , 505-525:

Հեղինակը Պոնտոսի թագավոր Միհրդատին (մ.թ.ա. 111-ից սկսած) և Տիգրանին ներկայացրել է որպես միևնույն ժամանակում ապրող բարեկամներ և դաշնակիցներ, Հռոմի երդվյալ թշնամիներ, հմուտ դիվանագետներ և հայրենասեր արքաներ: Հեղինակը այսպես է գրում Միհրդատի մասին՝ *«Պատերազմի փառք և բախտի հանճար»*[8]: Բայց հեղինակը շեշտադրում է նաև՝ *«Անկավ Միհրդատ, անկավ և Պոնտոս»*[9]: Միհրդատը մ.թ.ա. 63 թ. ինքնասպանությամբ վերջ է դրել իր կյանքին, իսկ հայոց արքան պայքարել է Հռոմի դեմ և ապահովել իր երկրի գոյությունը: Սմբատ Շահազիզը գեղարվեստական լեզվառճով կարծես թե վերահաստատել է Ռընե Գրուսեի վերը նշված մեջբերումը Հայոց տիրակալի մասին[10]:

Հայ թատերաբեմի վաստակավոր դերասան **Եդուարդ Չափրաստը** իր կյանքի վերջին տարիներին զբաղվել է նաև գրականությամբ և ունի մի քանի դյուցազներգություն՝ գրված չափական տողերով, գեղեցիկ պատկերներով: Դրանք են «Տիգրան Երկրորդ», «Արտաշես Բ», «Արշակ Բ», «Փառանձեմ թագուհի», «Հայկ Նահապետ» երկերը: Դրանք թեև դժվար ներկայանալի, սակայն գրական ու թատերական հոյակապ էջեր ունեն[11]: Նրա **«Մեծն Տիգրան»** դյուցազներգությունը պատմաժամանակագրական հաջորդականությամբ ներկայացրել է պատմական գործընթացները՝ ոճավորված գեղարվեստական ու դրամատիկ դրվագներով: Չափրաստը Տիգրան Երկրորդի կերպավորմամբ հաստատում է պատմական այն փաստը, ըստ որի Միհրդատի դուստր Կլեոպատրիայի հետ նրա ամուսնությունը բխել է միայն ու միայն Հայաստանի ազգային անվտանգության հեռանկարներից, իսկ Կլեոպատրան դարձել է Տիգրան Մեծի և Միհրդատի դաշինքն ամրապնդելու միջոց. *«Մեկը՝ ռազմական… մյուսն ալ երկուքդ ձեռք ձեռքի տված պիտի գործադրեք»*[12]:

Դրամայում շեշտադրվել են հայ-հռոմեական հարաբերությունները: Չափրաստը այսպես է մեկնաբանում Պոմպեոսի գործողությունները, որ նա վախեցել է, որ եթե հայոց արքան թշնամանա Հռոմի հետ, կարող է

---

[8] **Շահազիզ Ս.,** Բանաստեղծություններ/Միհրդատ/ Ե., Էդիթ Պրինտ, 2015, էջ 62:

[9] Նույն տեղում, էջ 63:

[10] Տե՛ս **Մարտիրոսյան Մ.,** Արքայից արքա Տիգրան Մեծի կերպարը հայ գրականության մեջ, «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդես, Ե., ՀՀ ԳԱԱ, № 3, էջ 20-28:

[11] Հայրենիք օրաթերթ/ ազգային, գրական, քաղաքական, հասարակագիտական/, 63-րդ տարի, № 14, 933, հինգշաբթի, յունիս 8, 1961:

[12] **Չափրաստ Եդ.,** Մեծն Տիգրան դիուցազներգութիուն, /4 արար 12 պրակ/, Պէյրութ, 1962, էջ 17:

դաշնակցել Պարթևների հետ և ավելի հզորանալ. *«Այսպիսով անոնք, զօրավուր ահեղ ույժ մը կը կազմեն»*[13]: Սա է պատճառը, որ Հռոմը ձգտում է Տիգրան Մեծի հետ դաշինքի կնքման: Բայց պատմական իրականության մեջ հեղինակի նկարագրածը ամբողջովին հակառակն է: Հռոմն ու Պարթևստանն են դաշինք կնքել ընդդեմ Հայաստանի: Իսկ այսպես կոչված «Արտաշատի» պայմանագիրը[14] թերևս պիտի անվանվի «Ծոփքի» պայմանագիր[15]: Այն իրականում ամբողջովին ուղղված էր Տիգրան Կրտսերին, որը Հռոմի համար իբրև հաղթաթուղթ էր Տիգրան Մեծի դեմ ապագա բախումներից խուսափելու համար: Դյուցազներգությունն ավարտվել է Պոմպեոսի և Տիգրան Մեծի միջև բարեկամության ուխտով և հետևյալ նախադասությամբ. *«Կեցցե Տիգրան Մեծ արքայից արքան, որ առաջնորդե իր ժողովուրդը դէպի լուսավոր պայծառ ապագան»*[16]:

Հայկ Խաչատրյանի «Տիգրան Մեծ» պատմավեպը մի ծավալուն ու ինքնատիպ պատմագեղարվեստական երկ է, որը լավագույնս է ներկայացրել Տիգրան Մեծի կերպարը՝ դիվանագիտական, ռազմական, քաղաքական, մարդկային ու արքայական դրսևորումներով[17]:

Վեպի հիմնական գաղափարը հայրենասիրությունն է, անսասան հավատը հարազատ ժողովրդի ներքին կենսական ուժերի, պատմական իրողությունների նկատմամբ: Ժողովրդի ինքնության և գոյատևման գործում մեծ նշանակություն է տրվում հայոց լեզվին[18]. *«Պայազատդ հայկազուն սովորեցրու հային, որ նա միայն լավ հարևան լինի, որ հարևանին դուր գալու համար նա չհանդերձավորվի նրա պես, խոսի նրա լեզվով, ամեն ինչում աշխատի նմանվել նրան: Այս մեծ աշխարհում մարդու ամենամեծ արատը նմանվելու գայթակղությունն է: Ով աշխատում է նմանվել, նա կորցնում է իրեն»*[19]: Սրանք Տիգրանի պապի՝ Արտաշես թագավորի պատգամներն են, որոնք Տիգրանը կարդում է Տիգբոնից Հայաստան մեկնելուց առաջ և ի պատասխան ասում. *«Լեռներ ու լեզու ուրիշ էլ ի՞նչ է ավանդել Հայկ Նահապետը: Կորցնես լեռները՝ կկորչի և լեզուն, կորցնես*

---

[13] Նույն տեղում էջ 73:

[14] **Պլուտարքոս**, Երկեր, Ե., //Հայաստան//, 1987, 799 էջ:

[15] Դրա հանգամանքին ու ճշմարությանը մենք անդրադարձել ենք (**Martirosyan M.** The image of Tigran the Great in painting, Journal of science. Lyon, 2023, №42 p. 17-24):

[16] Նույն տեղում էջ 87:

[17] Տե՛ս **Զրբաշյան Է.,** Հեռավոր անցյալի զգացողությամբ, «Սովետահայ գրականություն» ամսագիր, 1968, թիվ 1-4, էջ 144-146:

[18] Տե՛ս **Իշխանյան Ռ.,** Հայկ Խաչատրյան Տիգրան Մեծ վեպի մասին, «Սովետական դպրոց» թերթ, 1967, 25 հոկտեմբերի էջ 4:

[19] **Խաչատրյան Հ.,** Տիգրան Մեծ վեպ, Ե., «Հայաստան», 1972, էջ 17:

լեզուն՝ այդ լեռներն աչքիդ հարթություններ կերևան: Ես կպահեմ մեր լեռների պես հպարտ ու անկոտրում հայոց լեզուն, ես կպահեմ հայոց լեզվի պես անկոտրում մեր լեռները»[20]: Տիգրանը, իբրև գրական հերոս, առանձնանում է մի շարք հատկանիշներով, որոնցից են՝ հայրենիքի պատվի, արժանապատվության և, մանավանդ, ինքնության պահպանման նկատմամբ անզիջող նախանձախնդրությամբ և, դրա հետ կապված, հայ ժողովրդի միավորման, Հայաստանի անջատված մասերը հայրենիքին միացնելու անկոտրում ձգտումով: Վեպն ունի ճանաչողական կարևոր նշանակություն. այն հին Հայաստանի մասին շատ հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում մերօրյա ընթերցողին[21]:

***

Հայ իրականության մեջ քանդակագործության ասպարեզում Տիգրան Մեծի կերպարի հանրահռչակման լավագույն օրինակներից է՝ **«Տիգրան Մեծ» շքանշանը** (2002-2014 թթ.): «Տիգրան Մեծ» շքանշանի նախագծի հեղինակ **Տիգրան Պետրոսյանցն** ասել է. «Այս պահին համացանցում տեսնելով «Տիգրան Մեծ» շքանշանի պատկերը լցվեցի հպարտությամբ և ինձ աշխարհի երջանիկ մարդը զգացի: Եվ այդ ամենն այն պարզ պատճառով, որ այդ շքանշանը համարում եմ իմ զավակը: «Տիգրան Մեծ», «Վարդան Մամիկոնյան» շքանշանների ստեղծման գաղափարը, այդ գաղափարի իրականացման նամակ-հիմնավորումի պատրաստումը ՀՀ պաշտպանության նախարարին, ստեղծման սկզբնական նկարագիրը, գունային լուծումները, շքանշանների վրայի թանկարժեք քարերի քանակն ու տեղադրությունը, շքանշանների նկարագիրն ու կանոնադրությունը բացառապես իմ՝ Տիգրան Պետրոսյանցիս հեղինակային մենաշնորհն է: Իհարկե, ձևավորման-ամբողջացման մնացյալ աշխատանքները կատարել են նկարիչ-դիզայներները[22]:

«Տիգրան Մեծ» շքանշանը ութաթև աստղ է: Միմյանց հերթագայող 2 հավասարաչափ քառակուսիների համադրությունից առաջացած ութ եռանկյունաձև անկյուներում տեղադրված է արհեստական սուտակ, իսկ ութ եռանկյունների ծայրերին ամրացված են մեկական ոչ մեծ չափի ադամանդներ: Կլոր շրջանակի կենտրոնում տեղադրված է Տիգրան Մեծի դիմանկարը՝ (մեզ հայտնի դրամների պատկերով) դեմքի աջ ուղղվածությամբ. դիմանկարը ոսկեզօծ է և եզրապատված 15 ադամանդով

---

[20] Նույն տեղում էջ 18:

[21] Տե՛ս **Իշխանյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 4:

[22] **Պետրոսյանց Տ.,** «Տիգրան Մեծ» շքանշանի մասին, https://blog.mediamall.am/?id=6988 08.06.2023:

(բոլոր ադամանդները միասին 23-ն են): Շրջանակի ներքևի մասում արծնապատ կարմիր ֆոնի վրա արծաթով գրված է՝ «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ»: Շքանշանի ֆոնը սպիտակ է՝ կենտրոնում ութմիլիմետրանոց կարմիր շերտ, որի բոլոր կողմերը եզերված են դեղին շերտով[23]:

***

Գեղանկարչական արվեստում ևս Տիգրան Մեծի կերպարը մեծ ազդեցություն է ունեցել: Տիգրան Մեծի կեպարին անրադարձ են կատարել այնպիսի գեղանկարիչներ, ինչպիսիք են **Էդուարդ Իսաբեկյանն** իր **«Տիգրան Մեծ»** կտավով (ստվարաթուղթ, յուղաներկ, 50×70, 1993 թ.)[24], որդին՝ **Արամ Իսաբեկյանն** իր **«Տիգրան Մեծ»** կտավով (յուղաներկ, 28×21 սմ)[25], **Արտուշ Ոսկանյանն** իր **«Տիգրան Մեծ»** (100×70), կտավով և այլք: Արտուշ Ոսկանյանի հեղինակած կտավում կատարող-նկարիչը Հայոց արքայի կերպարը փորձել է միաձուլել լեռներին ու ժայռային զանգվածներն՝ այս ձևով ցույց տալով նրա հավերժական ներկայությունը մեր կյանքում: Միևնույն ժամանակ գիտակցելով, որ դրանք կրում են հսկայական էներգիա և տեղեկատվություն: Հայացք նետելով նկարի վրա՝ կարելի է «տեսնել»՝ քանի սերունդ է անցել նրանցից առաջ և ինչ իրադարձություններ են «նրանք» տեսել և որսացել, որը փորձել է բացահայտել հեղինակը[26]:

***

Երաժշտական արվեստում Տիգրան Մեծի կերպարը հմայել է եվրոպացի կոմպոզիտորներին, որոնց Տիգրանի կերպարում գերել են այդ տիրակալի մասին այն ժամանակների պատմությունները, որտեղ հայոց արքան որոշում էր աշխարհի ճակատագիրը:

Մեր ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են Տիգրան Մեծի մասին գրված չորս տասնյակից ավելի օպերաներ, որոնցում այս կամ այն կերպ հանդես է եկել հայոց արքա Տիգրան Մեծը: Բայց դրանցից առավել հռչակավոր է «**Միրո հաղթանակն ատելության նկատմամբ կամ Տիգրանը»,** որի լիբրետոն գրել է **Ֆրանչեսկո Միլվանին:** Երաժշտության հեղինակներն

---

[23] Տիգրան Մեծի շքանշանի նկարագրությունը և նմուշը հաստատելու մասին, https://www.irtek.am/views/act.aspx?tid=18539&sc=p44 09.06.2023:

[24] **Էդուարդ Իսաբեկյան**, Տիգրան Մեծ. 1993 կտավ, ստվարաթուղթ, յուղաներկ 50x70 ընտանիքի հավաքածու http://eduardisabekyan.com/?p=502 09.06.2023:

[25] **Արամ Իսաբեկյան,** «Տիգրան Մեծ» կտավ, https://aramisabekyan.com/?portfolio=5j6a2703 09.06.2023:

[26] **Արտուշ Ոսկանյան**, Tigran the Great, https://www.singulart.com/en/artworks/artush-voskanyan-tigran-the-great-1197323 09.06.2023:

են՝ **Բենեդետտո Միշելը** (ակտ I), **Անտոնիո Վիվալդին** (1678-1741 թթ.) (ակտ II), **Նիկոլո Ռոմալդին** (ակտIII)[27]: Բայց օպերան վերագրվել է Անտոնիո Վիվալդիին այն պարզ պատճառով, որ պահպանվել է երաժշտության միայն II ակտը: Անտոնիո Վիվալդին օպերան նվիրել է Հռոմի պապի ազգականուհի դոննա Ֆաուստինա Մատտեյ Կոնտին: Այն առաջին անգամ բեմադրվել է 1724 թ. ձմռանը, Հռոմում[28]:

Եզրակացություն

Հայոց արքայից արքա Տիգրան Երկրորդ Մեծը հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ բացել է մի դարաշրջան, որը հետագայում շատերը պետք է կոչեին իր անունով՝ Տիգրանական: Այն մեծապես պայմանավորված էր նրա կերպարով, որը ոչ միայն իր ժամանակաշրջանի, այլև հետագա դարերում միս ու այրուն ստանալով՝ դարձել է մեր պատմական ձեռքբերումների և հաղթանակների գլխավոր հավատամքը: Նա մեծագույն տիրակալ էր, ով իր ժամանակում հասցրեց լինել «արքայից արքա» Տիգրան Երկրորդ: Ստացել է «Մեծ», «Աստված», «Հելլենասեր» տիտղոսներ, որոնք պատմությունը շնորհում է միայն աստվածային ընտրյալներին: Նա տիրակալ էր, ով փոխեց Արևելքում պատմության ընթացքը և աշխարհին ճանաչել տվեց Հայաստանը: Այդ դժվարին ճանապարհին առաջնորդվել է միմիայն պետական շահով և չի դարձել բարբարոս, այլ մնացել է բարեպաշտ արքայից արքա Տիգրան Երկրորդ Մեծ: Տիգրան Մեծը մուտք է գործել եվրոպական պատմության ու մշակույթի ասպարեզ, դարձել հերոս, անմահ հերոս: Եվ ինչպես մի առիթով ասել է Ամենայն Հայոց կաթողիկոս **Վազգեն Առաջինը, «Ազգը, որ հերոս չունի, պատմություն չունի»[29]:**

Мадона К. Мартиросян

Образ патриотизма Тиграна Великого самый высокий совет

Заключение

Ключевые слова и выражения: Образ Тиграна Великого, Айк Хачатрян, Хачик Даштенс, Антонио Вивальди, Орден «Тигран Великий», Эдуард Исабекян.

---

[27] Տե՛ս **Siranossian A., Yervandian M. k.,** Les métamorphoses de Tigrane. Les hommes et leurs oeuvres histoire, 2. Sources d' Arménie, 2014, էջ 178:

[28] Նույն տեղում:

[29] **Պողոսյան Գ.,** Վազգեն Առաջինը մոտենում է Թեհլերյանին, համբուրում է նրա ճակատը և ասում..., http://www.irates.am/hy/1678948073 12.06.2023:

В статье кратко рассматривается образ Тиграна Великого (95-55 гг. до н.э.) в области литературы, скульптуры, живописи, музыки. Его образ преподносился как высший символ патриотизма.

Армянские художественные авторы почти не обращались к образу Тиграна Великого. Только историки размышляли в рамках темы. Между тем в 1684-1858 годах на европейских сценах каждое десятилетие рождалась новая опера «Тигран». Возможно, причина заключалась в отсутствии у Армении независимости и государственного мышления. Образ армянского царя упоминается армянскими авторами с первой половины 1940-х годов, во время советской Отечественной войны. В целях поднятия патриотического и боевого духа советских людей, борющихся с фашизмом, стали представлять исторических деятелей искусства, литературы и других областей. Тигран Великий, воплощение патриотического духа, несокрушимого упорства, физической и душевной силы, носитель идеи побед и мирового господства, стал популярной фигурой. С этого периода создаются исторические произведения, картины и скульптуры, посвященные Тиграну Великому, имеющие патриотическую направленность. Каждый из них внес большой вклад в популяризацию образа величайшего армянского правителя Тиграна Великого. В мире до сих пор нет известного царя, образ которого волновал и увлекал европейских композиторов так же, как образ Тиграна Великого. Нам известна уже 41 опера, в которых Тигран Второй играет главную роль. Среди этих опер более популярен «Тигран» Вивальди. В первую очередь они воплощали идею безоговорочной преданности Родине.

Madona K. Martirosyan

The image of patriotism of Tigran the Great high tip

Conclusion

Key words and expressions: The image of Tigran the Great, Hayk Khachatryan, Khachik Dashtens, Antonio Vivaldi, "Tigran the Great" Order, Eduard Isabekyan.

The article briefly discusses the image of Tigran the Great (95-55 BC) in the field of literature, sculpture, painting, and music. His image was presented as the supreme symbol of patriotism.

Armenian artistic authors almost did not refer to the image of Tigran the Great. Only historians have reflected within the framework of the topic. Meanwhile, in the years 1684-1858, a new "Tigran" opera was born on European stages every decade. The reason was perhaps the absence of Armenia's independence and state thinking. The image of the Armenian king has been

referred to by Armenian authors since the first half of the 1940s, during the Soviet Patriotic War. In order to raise the patriotic and fighting spirit of the Soviet people fighting against fascism, historical figures were presented in art, literature and other fields. Tigran the Great, the embodiment of the patriotic spirit, unbreakable perseverance, physica and mental strength, the bearer of the idea of victories and world domination, became a popular figure. Since that period, historical works, paintings and sculptures dedicated to Tigran the Great, with a patriotic orientation, have been created. Each of them has a great contribution in popularizing the image of the greatest Armenian ruler, Tigran the Great. There is still no known king in the world, whose image has moved and fascinated European composers as much as the image of Tigran the Great. We already know 41 operas in which Tigran the Second plays a major role. Among those operas, Vivaldi's Tigran is more popular. First of all, they embodied the idea of unconditional dedication to the motherland.

Օգտագործված գրականություն

1. **Ադոնց Ն.,** Հայաստանի պատմություն/ ակունքները X-VI դդ մ.թ.ա./, Երևան, «Հայաստան»,1972:
2. **Արամ Իսաբեկյանի** «Տիգրան Մեծ» կտավ, https://aramisabekyan.com/?portfolio=5j6a2703 09.06.2023:
3. **Արտուշ Ոսկանյան** Tigran the Great, https://www.singulart.com/en/artworks/artush-voskanyan-tigran-the-great-1197323 09.06.2023:
4. **Դոլուխանյան Ա.,** Մեծանուն պատմաբան, բյուզանդագետ և հայագետ Ն. Ադոնցը (Ծննդյան 140-ամյակի առթիվ), Պատմա-բանասիրական հանդես, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 2011, էջ 7-21:
5. **Դոլուխանյան Ա.,** Նիկողայոս Ադոնց, Երևան, «Արեգ», 2022:
6. **Էդուարդ Իսաբեկյան,** Տիգրան Մեծ. 1993, կտավ, ստվարաթուղթ, յուղաներկ 50x70, ընտաիքի հավաքածու http://eduardisabekyan.com/?p=502 09.06.2023:
7. **Իշխանյան Ռ.,** Հայկ Խաչատրյանի «Տիգրան Մեծ» վեպի մասին, «Սովետական դպրոց» թերթ, 1967, 25 հոկտեմբեր:
8. **Խաչատրյան Հ.,** «Տիգրան Մեծ» վեպ, Երևան, «Հայաստան», 1972:
9. **Հայ ժողովրդի պատմություն,** հտ.1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ, 1971:
10. **«Հայրենիք» օրաթերթ/ ազգային, գրական, քաղաքական, հասարակագիտական/,** 63-րդ տարի, № 14, 933, հինգշաբթի, յունիս 8, 1961:

11. **Հովհաննիսյան Պ.Հ., Մովսիսյան Ա.Ե.**, Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հտ. 1, հնագույն ժամանակներից մինչև մ.թ.ա. 298 թվականը, Երևան, ԵՊՀ, 2007:
12. **Մանասերյան Ռ. Լ.,** Տիգրան Մեծի անձի և գործունեության գնահատման շուրջ/ մ.թ.ա. 68 թ. Արածանիի ճակատամարտում Հայաստանի հաղթանակի 2080-ամյակի առթիվ/, ՎԷմ համահայկական հանդես, ԺԴ (Ի) տարի, թիվ 3 (79), հուլիս-սեպտեմբեր, 2022, էջ 33-60:
13. **Մարտիրոսյան Մ.,** Արքայից արքա Տիգրան Մեծի կերպարը հայ գրականության մեջ, «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդես, Երևան, ՀՀ ԳԱԱ, № 3, էջ 20-28:
14. **Մովսիսյան Ա.,** Տիգրան Մեծ. թագավորներից մեծագույնը, Երևան, ԵՊՀ, 2010 :
15. **Շահազիզ Ս.,** Բանաստեղծություններ/Միհրդատ/, Երևան, Էդիթ Պրինտ, 2015:
16. **Չափրաստ Եդ.,** Մեծն Տիգրան դիւցազներգութիւն, /4 արար, 12 պրակ/, Պէյրութ, 1962:
17. **ՊետրոսՅանց Տ.,** «Տիգրան Մեծ» շքանշանի մասին, https://blog.mediamall.am/?id=6988 08.06.2023:
18. **Պլուտարքոս**, Երկեր, Երևան, «Հայաստան», 1987:
19. **Պողոսյան Գ.,** Վազգեն Առաջինը մոտենում է Թեհլերյանին, համբուրում է նրա ճակատը և ասում..., http://www.irates.am/hy/1678948073 12.06.2023:
20. **Ջրբաշյան Է.,** Հեռավոր անցյալի զգացողությամբ, «Սովետահայ գրականություն» ամսագիր, 1968, թիվ 1-4, էջ 144-146:
21. **Սարգսյան Գ.Խ., Հակոբյան Թ. Խ., Ներսիսյան Մ. Գ.** և ուրիշներ, Հայ ժողովրդի պատմություն /հնագույն ժամանակներից մինչև մեր օրեր/: Երևան, ԵՊՀ, 1972 :
22. **Տիգրան Մեծի շքանշանի նկարագրությունը և նմուշը հաստատելու մասին,** https://www.irtek.am/views/act.aspx?tid=18539&sc=p44 09.06.2023:
23. **Martirosyan M.** The image of Tigran the Great in painting, Journal of science, Lyon, 2023, №42 p. 17-24
24. **Siranossian A., Yervandian M. k.,** Les métamorphoses de Tigrane. Les hommes et leurs oeuvres histoire, 2. Sources d' Arménie, 2014:

Խմբագրություն է ուղարկվել 14.06.2023թ.
Հանձնարարվել է գրախոսության 02.07.2023թ.
Հրապարակման է ներկայացվել 29.09.2023թ.